ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1962 Общественные науки

ԳԻՋԱԿԱՆ ԼՐԱՑՈՒ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱԲԻՆԵՏՈՒՄ

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը ՍՍՌՄ ժողովուրդների կյանքում մեծ փորձություն հանդիսացավ։ Այդ պատերազմում մեր երկրի բազմազգ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ համաշխարհային նշանակություն ունեցող պատմական հաղթանակ տարավ գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի դեմ։

Պատերազմի հենց սկզբից, Սովետական Միության Զինված Ուժերի շարքերում իրենց սխրագործություններով աշքի ընկան հայ ժողովրդի հազարավոր զավակներ ու դուստրեր։

1942—43 թթ. Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ նյութերը սկսեց հավաքել Ռևոլյուցիայի թանգարանը։

1944 թվականին այդ թանգարանի բազայի հրման վրա Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ հանգուցյալ Հ. Ա. Օրբելու ջանքերով Պատմության ինստիտուտում հիմնադրվեց Հայրենական Մեծ պատերազմի պատմության կաբինետը։

Կաբինետն իր գործունեության սկզբում հիմնականում զբաղվել է Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ նյութեր հավաքելով և կարճ ժամանակամիջոցում ստեղծել է արխիվ, որն իր գոյության ընթացքում հարստացվել է մեր ժողովրդի վառ հայրենասիրությունը լուսաբանող մեծաքանակ նյութերով ու դարձել գիտա-հետազոտական աշխատանքի լուրջ բազա։

Կաբինետը զբաղվելով նյութերի հավաքմամբ, միաժամանակ զբաղվում է դրանց գիտական մշակմամբ և գիտա-հետազոտական աշխատանքներով։

Ստեղծվել են Հայկական ազգային զորամասերի, Սովետական Միության մարշալների, գեներալների, Սովետական Միության հերոսների, բարձր, միջին, կրտսեր հրամանատարական կազմի շարքայինների, ռազմաճակատում մարտնչած հայուհիների և աշխարհազորայինների ֆոնդերը։

Կաբինետի հարուստ արխիվում առանձին բաժին են կազմում հերոս քաղաքներ՝ Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի, Ստալինգրադի[1] ու Կիևի պաշտպանությանը նվիրված ֆոնդերը, և այդ քաղաքների պաշտպանների շարքերում մարտնչած բազմահազար հայ ռազմիկների սխրագործությունները պատկերող փաստաթղթերը։

Ուշագրավ և փաստերով հարուստ ֆոնդ է իրենից ներկայացնում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին թշնամու թիկունքում պարտիզանական խոշոր միավորումներում և առանձին ջոկատներում գործած հայ պարտիզանների ֆոնդը։

Կաբինետի արխիվի լավագույն ֆոնդերից մեկն է համարվում տարբեր ռազմաճակատներում ու դիվիզիաներում պատերազմի ծանր փորձությունների օրերին, թշնամու կրակի տակ, հայերեն լեզվով լույս տեսած 16 անուն թերթերի՝ «Հայկական սնայպեր» (390-րդ Հայկական դիվիզիա), «Կարմիր զինվոր» (89-րդ Հայկական Թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիա), «Մարտ հանուն հայրենիքի» (408-րդ Հայկական դիվիզիա), «Սովետական ռազմիկ» (409-րդ Հայկական դիվիզիա), «Սուվորովական» (Լենինգրադի ռազմաճակատ) և այլ թերթերի կոմպլեկտներն ու մի շարք խմբագրությունների արխիվներից ստացված նյութերը։

Այդ բացառիկ թերթերն իրենց էջերում արտացոլել են հայկական զորամասերի, ստորաբաժանումների, բաշարի ռազմիկների մարտական սխրագործությունները։ Առանձին արժեք են ներկայացնում նաև նույն ֆոնդում պահվող Սովետական Բանակի Քաղվարչության կողմից հայերեն լեզվով և հայերի մասին հրատարակած մի շարք ուշագրավ կոչերը, թերթիկները, «Կարմիր Բանակի ագիտատորի» բլոկնոտի համարները։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրից թիկունքը ռազմաճակատի հետ մի միասնական լագեր էր կազմում։

Բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և ինտելիգենցիայի անձնվեր աշխատանքին վերաբերող շատ փաստաթղթեր կաբինետում կազմում են առանձին ֆոնդեր։

Մեծ խնամքով են պահվում Երևան, Լենինական, Կիրովական, Ալավերդի քաղաքներին հատկացված ֆոնդերը, որոնցում տեղադրված նյութերը արտացոլում են թիկունքի հերոսական աշխատանքը և անընդմեջ օգնությունը ռազմաճակատին։

---

[1] Այժմ Վոլգոգրադ։

Առանձին ֆոնդերում պահվում են Երևանի Ֆ. Է. Ձերժինսկու անվան հաստոցաշինական, Երևանի և Մեղրու կոնսերվի գործարանների, Ալավերդու պղնձաձուլական, Կիրովականի Ակ. Մյասնիկյանի անվան քիմիական և Լենինականի տեքստիլ կոմբինատների, «Արարատ» տրեստի, Սևանշինի, Էջմիածնի շրջանի Լենինի շքանշանակիր «Անաստված» (այժմ Լենինի անվան), Ստեփանավանի շրջանի Կույբիշև գյուղի «Կարմիր պարտիզան» կոլտնտեսությունների աշխատավորության անդուլ աշխատանքին նվիրված նյութերը։

Թիկունքի բաժնում առանձին ֆոնդ է կազմում Սոցիալիստական Աշխատանքի հերոսներ՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի առաջին տեղակալ Ա. Ի. Միկոյանի, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահի տեղակալ և սև մետալուրգիայի մինիստր Ա. Ֆ. Թեոսյանի, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լ. Ա. Օրբելու, հրետանու գեներալ-մայոր Հ. Մ. Ցոլյանի, ինժեներա-ավեացիոն ծառայության գեներալ-մայոր, գլխավոր կոնստրուկտոր Ա. Ի. Միկոյանի, երկաթուղային ճանապարհաշինարարության փոխգնդապետ Ն. Ա. Նարինյանի և Լենինականի շրջանարշային դեպոյի մեքենավար Ա. Մ. Խաչատրյանի, ապա կոլտուրայի տարբեր բնագավառներում աշխատող անվանի մարդկանց մի շարք գործերը։

Հատուկ ֆոնդ է հատկացված թիկունք և թիկունքից ուղարկված նամակների բաժնին։

Մեծ արժեք են ներկայացնում այն նյութերը, որոնք լուսաբանում են սփյուռքահայերի պայքարը երկրորդ համաշխարհային պատերազմում։

Կարինետի մի այլ ֆոնդում պահվում են լուսանկարներ, ալբոմներ և պատվոգրեր։

Առանձին խնամքով հավաքվել ու պահվել են հայ ժողովրդի նամակը ռազմաճակատում գտնվող իր զավակներին ստորագրված տեքստերը։

Կարինետի արխիվի ֆոնդերն անընդհատ հարստացվում ու ստեղծում են նորանոր գործեր, այն բազմաթիվ բեղմնավոր գործուղումներից, որ կատարել ու կատարում է կարինետի գիտական կոլեկտիվը։

Գիտական գործուղումներ են կատարվել Մոսկվա, Լենինգրադ, Ստալինգրադ, Կիև, Ռոստով, Թբիլիսի, Բաքու և ռնսպուբլիկայի Լենինական, Կիրովական, Ալավերդի, Ստեփանավան քաղաքները և մի շարք գյուղեր, որտեղ պետական, պարտիական, զինվորական արխիվներից, զինվորական կոմիսարիատներից, թերթերի խմբագրություններից հայտնաբերվել, հավաքվել են պարգևաթերթիկներ, մարտական և պարտիական բնութագրեր, ռազմաճակատային թերթերից հոդվածներ, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրեր, Մինիստրների Սովետի որոշումներ և Գերագույն Գլխավոր Հրամանատարության հրամաններ։

Անձնական հանդիպումների միջոցով կարինետի աշխատակիցները, Հայրենական պատերազմում աչքի ընկած մարտիկներից, Սովետական Միության հերոսներից, զորավարներից ու թիկունքային աշխատանքներում աչքի ընկած բանվորներից, կոլտնտեսականներից, ինտելիգենցիայի ներկայացուցիչներից, ձեռք են բերել արժեքավոր մեծարանակ փաստաթղթեր, լուսանկարներ, սխեմաներ, որոնք ցույց են տալիս ռազմաճակատում և թիկունքում մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մղված պայքարում հայ ժողովրդի զավակների մարտական և աշխատանքային սխրագործությունները։

Այս տարի կարինետի գիտաշխատակիցների բրիգադան (Ն. Խալեյան՝ ղեկավար, Ջ. Դրիգորյան և Լ. Մարտիրոսյան) մեկ ամիս ժամանակով գործուղվեցին Դոնի Ռոստով և Կիև քաղաքները։ Արշավախումբը եղավ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի հայաբնակ Զալդրը, Մյասնիկավան, Մեծ Սալա, Թովթի գյուղերում, և մոտիկից ծանոթացավ տեղի աշխատավորության հետ։ Մյասնիկյանի շրջանի զինվորական կոմիսարիատից, շրջանային «Коммунар» թերթի կոմպլեկտներից բաղվեցին համապատասխան նյութեր։

Կարինետի աշխատակիցները եղան Բերբեր օրայում, որտեղ 1941 թ. նոյեմբերին Ռոստովի պաշտպանության ամենածանր օրերին կենաց ու մահու մարտեր մղեցին 16 խիզախ հրետանավորներ լեյտենանտ Սերգեյ Օհանյանի հրամանատարությամբ։ Նրանք բոլորը ընկան հերոսի մահով, բայց արգելեցին թշնամու մուտքը իրենց բնագծերը։ Լեյտենանտ Սերգեյ Օհանյանը, կրտսեր քաղղեկ Սերգեյ Վավիլովը և ավագ սերժանտ Ֆեոդոր Բալեստան հետմահու արժանացան Սովետական Միության Հերոսի կոչման։ 1960 թվականին Մեծ Սալայի 26 կոմունարների անվան կոլտնտեսության երախտագետ աշխատավորությունը 16 զոհված հրետանավորների դերեզմանը Բերբեր օրայից փոխադրել է գյուղի կենտրոնը և նրանց շիրմի վրա կանգնեցրել 13 մետրանոց մի հոյակապ հուշարձան։ Այդ հուշասյան ցածի մասում շրջանաձև պատկերված է հրետանավորների վերջին մարտը ներկայացնող դիորամա, որի ճակատի մասում մեծ տառերով գրված է.

«Նրանք մարտնեցին մինչև մահ»

Նոր ու արժեքավոր նյութեր ձեռք բերվեցին Ռոստովի պարտիական, պետական արխիվներից, Պրոլետարսկի շրջանի զինվորական կոմիսարիատից, մարզային դավառագիտական թանգարա-

նից, իսկ անձնական հանդիպումների ժամանակ գրի առնվեցին Հայրենական պատերազմի մասնակից հայ ռազմիկների մարտական հուշերը, միաժամանակ նրանք կարիներտին հանձնեցին հայրենասիրական վառ էջեր պատկերող հոդվածներ, պաշտոնական փաստաթղթեր, նամակներ և լուսանկարներ։

Այնուհետև արշավախումբը մեկնեց Ուկրաինական ՍՍՌ-ի մայրաքաղաք Կիև։ Ուկրաինայի պաշտպանության և ազատագրման համար մղվող մարտերում մարտնչել են հազարավոր հայ ռազմիկներ, հրամանատարներ, զորավարներ։ Բավական է նշել, որ միայն Դնեպրի հաղող գետանցման, նրա աջ ափին հենակետ ստեղծելու և այն ընդլայնելու ժամանակ ցուցաբերած անձնական խիզախության և հերոսության համար 23 հայ ռազմիկ արժանացել են Սովետական Միության Հերոսի բարձր ու պատվավոր կոչման։ Հայ ժողովրդի ավելի քան 600 բաջագուն զավակներ Սովետական Միության կրկնակի հերոսներ՝ Ս. Ա. Կովպակի, Ի. Ս. Ֆեդորովի, Սովետական Միության հերոսներ Մ. Ի. Նաումովի, Պ. Ի. Վերշիգորայի, Ա. Ն. Սարուրովի, Ա. Զ. Ոդուխայի, Ս. Վ. Ռուդնևի և շուրջ 18 այլ պարտիզանական խոշոր միավորումների շարքերում մարտնչել են թշնամու թիկունքում հանուն Ուկրաինայի ազատագրման։

Ձեռք բերված նյութերը կօգտագործվեն կարիներտի կոլեկտիվի կողմից պատրաստվող «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին» փաստաթղթերի ժողովածուի («ռազմաճակատ» բաժնի) կազմման ժամանակ և Հայրենական պատերազմի պատմության թեմատիկայով զբաղվող բնակիչների կողմից։

Նոր նյութերի հիման վրա կազմվեցին բազմաթիվ նոր գործեր և համալրվեցին կարիներտի արխիվում պահվող շատ գործեր ու ֆոնդեր։ Համալրվեցին Սովետական Միության հերոսներ Ս. Մարտիրոսյանի, Լ. Դարբինյանի, Լ. Զաքշախյանի, Գ. Բալայանի, Ռ. Հակոբյանի ֆոնդերը։ Յուրահատուկ տեղ են գրավում և մեծ արժեք են ներկայացնում Սովետական Զինված Ուժերի շարքերում աչքի ընկած շուրջ 60 հայ զորավարների ֆոնդերը։

Կյանքի և մարտական գործունեության պատմության ամբողջական պատկերացում են տալիս Սովետական Միության Մարշալ, Սովետական Միության Հերոս Ի. Խ. Բագրամյանի, Նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակովի և Ավիացիայի Մարշալ Ս. Ա. Խուդյակովի (Ա. Խանֆերյանց), Սովետական Միության Հերոս, գեներալ-գնդապետ Հ. Խ. Բարաբանյանի, հրետանու գեներալ-գնդապետ Մ. Ա. Պարսեղովի, գեներալ-լեյտենանտներ՝ Ս. Ս. Մարտիրոսյանի, Ի. Դ. Վեքիլովի, գեներալ-մայոր Սովետական Միության Հերոս Հ. Դ. Բարայանի ֆոնդերում, գիտականորեն մշակված արժեքավոր փաստաթղթերը։ Վերջերս ձեռք բերված նյութերի հիման վրա ստեղծվել են գեներալ-լեյտենանտ Ա. Տեր-Դասպարյանի, գեներալ-մայորներ Տ. Մ. Մելքումյանի, Կ. Ա. Լազարևի, Ս. Ի. Կարբիկյանի և Ա. Մ. Ավքանդիլովի գործերը։

Մեծ խնամքով են պահվում և հատուկ գիտական մշակման են ենթարկվել Սովետական Միության ավելի քան 100 հերոսների ֆոնդերը։ 1959 թ. Մոսկվա կատարած գործուղման ընթացքում կարիներտի աշխատակիցները ՍՍՌՄ Պաշտպանության Մինիստրության արխիվներից ձեռք բերեցին շուրջ 80 հերոսների պարգևաթերթիկներ, անձնական գործեր, լուսանկարներ։

Այդ գործուղման ընթացքում հայտնաբերվեցին Սովետական Միության երկու նոր հերոս՝ ավագ լեյտենանտ Վլադիմիր Յավրումովը և կրտսեր լեյտենանտ Հարություն Մելքեթյանը։

Գվարդիական 9-րդ Կարմրադրոշ Պոլտավյան օդադեսանտային դիվիզիայի գվարդիական 28-րդ Դեմբլինյան գնդում էր ծառայում ավագ լեյտենանտ օդաչու Վլադիմիր Յավրումովը։

Գնդի հրամանատարությունը բարձր գնահատելով Սանդոմիրյան օպերացիայի հերոս, վաշտի հրամանատար Յավրումովի հրամանատարական հմտությունը և անձնական խիզախությունը, հետմահու ներկայացնելով Սովետական Միության Հերոսի կոչման, նրա պարգևաթերթիկում գրում է. — «Поставленная командованием задача прорыва укрепленной линии обороны противника на главном направлении, благодаря героизму тов. Яврумова, который ради победы пожертвовал собой, была выполнена»[2].

Սովետական Միության ամենակրտսեր հայ հերոսը դա կրտսեր լեյտենանտ Հարություն Մելքեթյանն է (ծնված 1925 թ. հոկտեմբերին)։

Նա 1943 թ. հուլիսին մեկնում է Սովետական Բանակ և գերմանական զավթիչների դեմ մարտնչում Ուկրաինական առաջին ռազմաճակատում։ Տանկային 6-րդ կորպուսի 17-րդ մոտոմեքենայացված բրիգադայի շարքերում հրամանատար Մելքեթյանը մասնակցում է Լվով քաղաքի ազատագրմանը, ապա Սանդոմիրյան պլացդարմի ու Չեստոխովա քաղաքի ազատագրման համար մղված կատաղի մարտերին։

17-րդ գվարդիական մոտոմեքենայացված բրիգադան սրընթաց գրոհով շարժվում է առաջ և 1945 թվականի հունվարին հասնում Օդեր գետին։ Հարություն Մելքեթյանն իր դասակով զո-

2 ՍՍՌՄ Պաշտպանության Մինիստրության արխիվ, գ. 10/176, էջ 322։

Ծեղեկագիր, 1—7

ռամասում առաջինն է հաղթահարում ջրային ընագիծը, գետանցում Օդերը և գրոհում գետի ձախ ափի բարձունքներում պատսպարված թշնամու վրա, դուրս քշում նրանց դիրքերից և կլենկակոխ հետապնդելով հակառակորդին գրավում է Կերեն քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասը։ Մելեթյանի դասակը ետ է մղում թշնամու կատաղի 6 հակագրոհ և հաջող գործողության շնորհիվ ապահովում է հրաձգային մյուս ստորաբաժանումների գետանցումը։

Օդերը հաջող գետանցելու, նրա ձախ ափին պլացդարմ գրավելու և այն ընդարձակելու համար կրտսեր լեյտենանտ Մելեթյանը հրամանատարության կողմից ներկայացվում է Սովետական Միության Հերոսի կոչման. հրամանատարությունը նրա պարգևաթերթիկում գրել է.

«Бригада, стремительно наступая вперед, 24 января 1945 года достигла реки Одера. 25 января, выполняя приказ командования, стрелковые подразделения на подручных средствах: лодках, плотах под интенсивным пулеметно-автоматным огнем и обстрелом зенитной артиллерии форсировали крупнейшую водную преграду Германии — реку Одер.

..Не имея достаточной огневой поддержки артиллерии, взвод тов. Мелетяна в течение января отбил шесть ожесточенных контратак противника, подпуская на близкое расстояние 20—30 метров наступающих гитлеровцев, он интенсивным автоматно-пулеметным огнем расстреливал немецких солдат. Когда противник достиг окопов наших бойцов, тов. Мелетян первым бросился в рукопашную схватку. Его примеру последовали все бойцы, и противник был вынужден отступить. Он лично при отражении вражеских контратак уничтожил огнем из автомата восемь гитлеровцев»[3].

Հատուկ ֆոնդերում պահվում են նաև մեծ բանակությամբ նյութեր, որոնք շարքային մարտիկների կատարած հերոսական սխրագործությունների հոյակապ վկայագրեր են։ Այստեղ հիշատակության արժանի են «Փառքի» շքանշանի ասպետների և բազմաթիվ շարքայինների գործերը։

Տարիների ընթացքում կարինետի կատարած աշխատանքների մեջ կարևոր և առաջնակարգ տեղ է գրավում հավաքված արխիվային փաստական նյութերի հիման վրա Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության վերաբերյալ նյութերի գիտական մշակումն ու առանձին աշխատանքների լույս ընծայումը։

«Նյութեր Հայրենական Մեծ պատերազմի պատմության» սերիայով և առանձին հարցերի լուսաբանումներ նվիրված, լույս է ընծայվել 52 անուն գիրք և բրոշյուր։ Գրվել և պաշտպանվել են մի քանի թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ. գրվել են բազմաթիվ դիպլոմային աշխատանքներ։

Հրատարակված աշխատություններից են Ա. Մնացականյանի «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում», «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության» 3-րդ պրակի՝ Ն. Խալեյանի «Հայ ժողովուրդը Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի տարիներին (1941—45 թթ.)» բաժինը, Ս. Նալբանդյանի «Հայ Թամանցիներ» և շատ այլ աշխատություններ և բրոշյուրներ։

1961 թվականին կարինետի գիտ. կոլեկտիվը, սեկտորի 3 աշխատակիցների մասնակցությամբ հրատարակության է պատրաստել «Գիրք հերոսների մասին» ժողովածուն։ Արխիվային հարուստ փաստաթղթերի հիման վրա վեր են հանվել հայ ժողովրդի ավելի քան 100 փառաբանված արի զավակների կենսագրություններն ու նրանց անցած մարտական ուղու պատմությունը։

Լենինյան կոմերիտմիության և Սովետական Միության Կոմունիստական պարտիայի շարքերում դաստիարակված այդ հերոս զավակները ռազմաճակատում կատարած անօրինակ սխրագործությունների համար արժանացել են Սովետական Միության Հերոսի բարձր ու պատվավոր կոչման։

Կարինետը շարունակում է սերտորեն կապ պահպանել Մոսկվայի Սովետական Բանակի, Ռևոլյուցիայի, Լենինգրադ քաղաքի պատմության, Ռազմածովային, Հրետանային պատմական, Ստալինգրադի Ցարիցին-Ստալինգրադի պաշտպանության, Սևաստոպոլի պաշտպանության, Կիևի պատմագիտական, Մինսկի Հայրենական պատերազմի, Ռոստովի մարզային գավառագիտական թանգարանների, ինչպես նաև ՍՍՌՄ Պաշտպանության Մինիստրության Կադրերի Դիմավոր Վարչության, Ուկրաինական, Վրացական, Ադրբեջանական պետական ու պարտիական և Պատմության ինստիտուտների արխիվների հետ։

Հերոս քաղաքներ՝ Լենինգրադի պատմության, Ստալինգրադի պաշտպանության թանգարանների պահանջով կարինետի կողմից կազմվել և ուղարկվել են այդ քաղաքների պաշտպանությանն ակտիվորեն մասնակցած հայ ժողովրդի դավագույն զավակների անձնուրաց ծառայությունների

[3] ՍՍՌՄ Պաշտպանության Մինիստրության արխիվ, գ. 10/175, էջ 164։

վերաբերյալ անոտացիաներ, լուսանկարներ և փաստաթղթեր։

Ուղարկված փաստաթղթերից ուշագրավ է Գվարդիական Հայկական 51 հրաձգային դիվիզիայի[1] պատմությունը։

Նույն դիվիզիայի մարտիկների, սերժանտների և հրամանատարների նամակը ուղղված Հայաստանի աշխատավորությանը։

Լենինգրադ ուղարկված փաստաթղթերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Բանակի Ռազմական խորհրդի անդամ Բենիամին Գալբստյանի մասին եղած նյութերը։ Լենինգրադցիները մինչև օրս էլ մեծ սիրով են խոսում հերոս քաղաքի մեծ հայրենասեր գեներալ-մայոր Գալբստյանի մասին և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով Լենինգրադի աշխատավորներն ու Լենինգրադի Ռազմական օկրուգը Աղեքսանդր Նևսկու լավրայում կանգնեցրել են նրա մարմարյա հուշարձանը։ Ուղարկված նյութերը մեծ խնամքով են պահվում համապատասխան թանգարանների արխիվներում և ցուցադրված լուսանկարներն ու փաստաթղթերը գրավում են այցելուների ուշադրությունը։

Կարինետը սերտ կապի մեջ է գտնվում Հայրենական Մեծ պատերազմի աչքի ընկնող զորավարների ու ռազմիկների հետ, որոնք մեծ օժանդակություն են ցույց տալիս Հայրենական պատերազմի պատմության կարինետի արխիվի հարստացմանը և Հայրենական պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը վերաբերվող հարցերի ավելի լրիվ լուսաբանմանը։

Ք. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԻՆ

Հիմնվելով սոցիալիզմի սիստեմի առավելությունների վրա, ՍՄԿԿ-ն դրել է համաշխարհային պատմական նշանակության խնդիր՝ ՍՍՌՄ-ի բնակչության համար ապահովել կյանքի ամենաբարձր մակարդակ, կապիտալիստական ամեն մի երկրի համեմատությամբ։

Պարտիայի Ծրագրում նշված են առաջիկա տասնամյակում և քսանամյակում սովետական ժողովրդի կյանքի մակարդակի բարձրացման ցուցանիշների մի ընդարձակ սիստեմ։

Այդ վիթխարի, խորապես մարդկային պլանը կյանքում իրականացնելու գործում մեծ անելիքներ ունեն ժողովրդական բարեկեցության ուսումնասիրությամբ զբաղվող տնտեսագետները։

Կյանքի մակարդակի ուսումնասիրման բնագավառում կարևոր իրադրություն էր 1961 թվականի նոյեմբերին Երևան քաղաքում հրավիրված Համամիութենական գիտական սեմինարը՝ նվիրված ժողովրդական սպառման պրոբլեմի հետազոտման գործում մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմանը։ Սեմինարը համատեղ հրավիրել էին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Աշխատանքի և աշխատավարձի Պետական Կոմիտեի Աշխատանքի Գիտա-հետազոտական ինստիտուտը։

Սեմինարի հեղինակ աշխատանքների ընթացքում ժողովրդական սպառման պրոբլեմի մասին լսվեցին 22 զեկուցում և 20 ընդարձակ նյութեր։

Բացման խոսքով սեմինարում հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը։

«Ժողովրդական սպառման դինամիկական մոդելները» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտի Տրնտեսագիտական-Վիճակագրական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ Ա. Կարապետյանը։ Նա նշում է, որ յուրաքանչյուր մաթեմատիկական մոդել պետք է վերարտադրի ուսումնասիրվող երևույթների հիմքում ընկած բանական հարաբերակցությունները։ Ժողովրդական սպառման բնագավառում այդ հարաբերակցությունները առանում են հետևյալ տեսքը՝ սպառման ծավալը հավասար է սպառողների քանակի և սպառման նորմայի արտադրյալին։ Այս հավասարումը պլանային հաշվարկումների մեջ օգտագործելու համար պետք է իմանալ ոչ միայն սպառողների թիվը, այլև կանխորոշել նրանց ապագա սպառման նորմաները։ Զեկուցողի կարծիքով ապագա նորմաների որոշման հարցում կարելի է ունենալ երկու մոտեցում՝

[1] 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիան Ստալինգրադի հերոսական մարտերում աչքի ընկած ծառայությունների համար արժանացավ գվարդիական կոչման և վերանվանվեց 56-րդ Գվարդիական հրաձգային դիվիզիա։